

հասիրութեամբ ինծի կ'ընես . յարգանքս ու երախտագիտութիւնս զրաւեցիր : Բայց նոյն իսկ կայսեր պէտք է ելլէ իմ խնդիրքս այս իրիկուն , կամ ուշ ուշ վաղը առաւօտ . կրնաս հաւատարիմ սուրհանդակ մը ճարել :

— Այո , ինչպէս ինծի համար , պատասխանեց ծերունին , քիչ մը մտածելէն վերջը :

— Մէկ հարցմունք մ'ալ , յաւել Շառնէ . չես վախեր ինծի ըրած մասնաւոր ծառայութեանդ պատասխանատուութենէն :

— Բարիք ընելու հաճութիւնն ամեն վախ փարատել կու տայ : Ինչ կ'ուզէ ըլլայ՝ երանի թէ քիչ մը քու թշուառութիւնդ կարենամ սփոփել : Գիտեմ՝ երկնից կամաց հնազանդիլ :

Շառնէ մինչև 'ի խորս սրտին զգացուեցաւ այս պարզ բառերէն . խանդակաթ աչօք զծերունին դիտեց :

— Ինչպէս կ'ուզեմ ձեռքդ սխմել , ըսաւ , և ուժով մը ձեռքը դէպ 'ի պըզտիկ պատուհանը երկնցուց . ժիրարտի ալ իրենը վանդակներէն դուրս հանեց , բայց ընդունայն եղաւ . չկրցան իրարու հասցընել : Ան ատեն ծերունին գորովագութ մորմոքմամբ ներշնչեալ՝ որ արգելականի մը հոգւոյն մէջ շատ վառ է , շուտ մը վզնոցը քակեց , մէկ ծայրէն բռնեց ու միւսը Շառնէի նետեց , որ եւ ռանդեամբ բռնեց ու երկու ծայրերը ձեռքերնին կրկին կրկին այն անզգայ կտաւը սրտալիբ զգացմամբ շարժեցին :

Շառնէ Բիլլիւսի քովէն անցնելու ժամանակ — Զքեզ պիտի ազատեմ , ըսաւ : — Սենեակը քաշուեցաւ , թաշկինակներուն ամենէն ճերմակն ու նուրբը առաւ , խնամքով ակռախառնիչը կտրեց , թանաքը շտկեց նորոգեց ու փութով գրել սկսաւ : Երբ աղերսագիրը լմնցուց , որ իրեն յուզեալ ամբարտաւանութիւնը սաստիկ նեղեց , վանդակապատ պատուհանէն պզտիկ չուան մ'երկնցաւ գաւթին որմոյն երկայնութեամբ . աղերսարկուն անոր վրայ կապեց աղերսագիրը , ու չուանը վեր ելաւ : Ժամ մը վերջը աղերսագիրն առ

կայսրը տանող անձը առաջնորդի մը հետ ճամբայ էր ընդ մէջ Սուզայի , Պուսոլինոյի և Ս . Գէորգայ հովիտներուն Տորիա-թիքարիա աջ գետափունքէն երթալով : Երկուքն ալ ձիով էին՝ բայց 'ի զուր կը փութային . անակնկալ արգելքներ ճամբանին արգիլեցին : Նոր եկած անձրեւներով գետինը շաղախտած էր , առուակը շատ տեղեր ոռոգեր էր . հեղեղները կարծես թէ միացուցեր էին Տորիա և Աւիլեանոյ լճերը : Արդէն ճիւղինոյի դարբնոցները հեռուն անոնց ետեւէն հետզհետէ աւելի կարմիր տեսնուելով կ'իմացնէին թէ դիշերը մօտ է : Լաւ սեպեցին հասարակաց ճամբէն երթալ . անցան նեղութեամբ Բիլիւսի պողոտայէն ու իրիկունէ շատ առաջ թուրին հասան :

Հոն իմացան որ կայսրը Ալեքսանդրիա գացեր էր :

Կը շարունակուի :

ՔՈՔԱ

Տարակոյս չկայ որ ո՛ր և է կերպով մարդկային տնտեսութեան միջոցները դիւրացընելը գովելի և պիտանի բան է . ուստի մտադրութեան արժանի է Պ . Բիժոյ բժշկին կլիմավարժութեան (acclimatation) ընկերութեան ըրած առաջարկութիւնը՝ քոքայի գործածութիւնը եւրոպական ժողովրդոց մէջ ալ մտցընելու համար , մէկ մը իբրեւ թէյի և գաֆէի կարգ նոր ըմպելի մը , երկրորդ՝ իբրեւ մասնաւոր զրգուիչ մը (stimulant)՝ 'ի պէտս կարօտ մարդկան , երրորդ իբրեւ համեմաւոր նիւթ մը , ու որ աւելի հաճոյ և տանելի է անոնց՝ որոց ծանր և տաստիկ զրգուող կու գան թէյ և գաֆէն :

Այնչափաւ ժամանակէ 'ի վեր Պոլիսիոյ՝ մէջ եղած է քոքայի գործածու-

1 Հարաւային Ամերիկայի մէջ փոքր տէրութիւն մ'է :

թիւնն . նոր աշխարհին գիւտէն մինչև հիմայ կը պահուի նոյն սովորութիւնը թէ վարի աստիճանի մարդկանց և թէ քաղաքացւոց մէջ . առաջինները մազ-տաքէի պէս կը ծամեն զայն , որուն մեծ յատկութիւններ ալ կու տան , ինչպէս առ ժամանակ մը մարդու քաղցը և ծարաւը անցնել , և ուժը վրան պահել , առանց ուրիշ սննդարար բան մը առ-նելու . իսկ քաղաքացիք թէյի պէս խմե-լու կը գործածեն իրեն համեմային մա-նաւոր ճաշակին համար , որ վարժող-ներուն շատ ախորժելի կու գայ :

Քոքայի ծառը շատ կը գտուի Պոլի-վիոյ մէջ , և կրնայ ալ դիւրաւ տարա-ծուիլ Օրանի կողմերը կամ Ս . Ֆրան-սիսգոյ հովտին մէջ : Քոքան քաղելու կերպը շատ պարզ է , և չունի մաս-նաւոր պատրաստութիւններ , ինչպէս հնձու թէյը , որ ան պատճառաւ ուրիշ տեղ մշակելը շատ դժար է , բաց 'ի Զի-նէն' ուր գործաւորաց վարձքը աժան է : Զինու ազնուագոյն թէյին հետ կրնան համեմատուիլ քոքայի տերեւները հա-մի փափկութեան կողմանէ . եթէ թէյէն վերցուին համեմային և անուշահոտու-թեան սկզբունքը , որ օտար բուսոց ծա-ղիկներէն անոր մէջը կը խառնուին : Քո-քան տեսքը և գունով շատ նման է թէյի , և կրնայ անոր տեղ անցնիլ : Մե-ծաւ մասամբ ստամոքաց ալ աղէկ է ջրային գրգռութեան փնասակար չըլա-լուն համար : Ըստ իս , կ'ըսէ Բիժոյ բը-ժիշկն , կանանց , տղոց և մտաւոր զբաղ-մանց տէր եղողներուն սովորական թէյը պէտք է որ քոքան ըլլայ : Քոքան ոչ միայն մարսողութիւնը կը դիւրացնէ , այլ և յերկարելով զգալի կերպով կը դանդաղէ ներս ընդունուած նիւթոց ազդեցութիւնը : Գաֆէի գաւաթով կամ արգանակի պնակով մը քանի մ'անգամ քոքա խմելով կրնայ մարդ առանց նեղութիւն մը զգալու սպասել ընթերցաց : Հնդիկներն որ քոքայի տե-րեւ կը ծամեն , երկայն ճամբորդու-թիւն կ'ընեն գրեթէ անկերակուր ա-ռանց անօթութիւն մը զգալու , եթէ հետինին պատրաստ քոքա ունենան :

Բաց 'ի ուրիշ յատկութիւններէն միայն ասոր համար կ'արժէր քոքայի գործա-ծութիւնը մոցընելը զինուորաց և աշ-խատաւորաց մէջ , որ կրնայ նաև խա-փանել ծխախոտ ծամելու գարշելի սովորութիւնը : Գնոյ կողմանէ ալ (եթէ նաւահանգիստ բերուածը հազարա-կրամը 5 ֆր . սեպենք) շատ աւելի ա-ժան կիյնայ քան զհասարակ թէյը , վասն զի կէս քանակութեամբ քոքան համեմատութեամբ թէյի աւելի ազդե-ցութիւն ունի : Շատ հաւանական է որ եթէ քոքայի գործածութիւնը ընդհա-նուր ըլլար , շատ տնկելով զինն ալ ա-ւելի աժան կ'ըլլար 'ի նպաստ աշխա-տաւոր մարդկան : Այս ալ կայ որ քո-քան աւելի համեմային ըլլալով՝ շատ աւելի դիւրաւ կը խմուի առանց չաքա-րի քան զԶինու թէյը : Ինչպէս ուրիշ ա-մենայն տերեւներ որ պարզ չորցուցած կը պահուին , քոքան ալ օգոյ թացու-թենէն ու չորութենէն կ'այլայլի . բայց իր ամեն յատկութիւններովը աղէկ վի-ճակի մէջ պահելու համար՝ լաւ գո-ցուած արկեղ մէջ , և կամ ներսէն պը-ղինձ թիթեղով պատած պարկերու մէջ դնելու է : Վերջ բանիս , քոքայի տերեւոց գործածութիւնն արժանի է ընդունելութեան , թէ իրեն մարսեցու-ցիչ զօրութեանն և թէ անուշահոտու-թեանն համար :

Բեռեռաքանդակ կամ սեպագիր ռը-
ձակք յԱյրարատեան աշխարհի .

Բուն Հայաստանի կամ Այրարա-տայ զանազան գաւառաց մէջ ալ զա-նազան տեղ երևնալ սկսան բեռաձև արձանագրութիւնք , որոց մէկուն վրայ է հետեւալ յօդուածս , զոր գրեց Պ . Մորտզման գերմանացին՝ հիւպատ Ա-զատ քաղաքաց Գերմանիոյ , և բազմա-հմուտ արևելագէտ , հրատարակելու 'ի Բազմավիպիս . ինչպէս նաև ուրիշ ար-ձանագրեր ալ՝ որ կը յուսանք ասկէ